ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 28.09/486
28.09.2015 թ.

ՀՀ գլխավոր դատախազ
Գևորգ Կոստանյանին

Պատճենը՝

ՀՀ Հատուկ քննչական ծառայության պետ՝
Վ. Շահինյանին

Հարգելի պարոն գլխավոր դատախազ,

2015 թվականի սեպտեմբերի 18-ին hraparak.am ինտերնետային լրատվական կայքը հրապարակել է «Շուտ գնա ստեղից, թե չէ դու առանց արգանդի կմնաս. Հերթական միջադեպը Սաշիկ Սարգսյանի մասնակցությամբ»[1] լրատվական նյութը:

Ըստ լրատվական նյութի՝ «Լրատվական կայքի խմբագրություն է դիմել մի կին, ով հայտնել է, որ սեպտեմբերի 17-ին, կեսգիշերին մոտ ինքը որդու հետ դուրս է եկել փողոց՝ շնիկին ման տալու: Երբ հասել է Թումանյան փողոցի միջնամասը՝ «Քոֆե-շոպ» սրճարանի մոտ, տեսել է, որ Սերժ Սարգսյանի եղբայրը՝ Սաշիկ Սարգսյանը, ով հարեւան շենքում է բնակվում, փողոցում կանգնած է: Այդ պահին նրա կողքով անցնելիս է եղել մի զույգ՝ երիտասարդ աղջիկ-տղա: Ցավոք, ինքը չի հասցրել նկատել, թե ինչ է տեղի ունեցել հենց այդ պահին՝ կամ Սաշիկ Սարգսյանն ինչ որ ռեպլիկ է արել, կամ՝ հայացքն այն չի եղել, ինչին ի պատասխան երիտասարդը բորբոքվել եւ պատասխանել է: Չի անցել մի քանի վայրկյան, հավանաբար Ս. Սարգսյանի կանչով, ժամանել են 2 ջիպ, դրանց միջից դուրս են եկել մի խումբ պարապած տղաներ եւ հարձակվել են իր ընկերուհու թասիբին կանգնելու փորձ արած երիտասարդի վրա: Ընկերուհին փաթաթվել է տղային, գոռացել-օգնության կանչել, բայց հրոսակախումբը նրան պոկել են տղայից, մի կողմ տարել ու տղային դաժան ծեծի ենթարկել: Տեսարանն այնքան սահմռկեցուցիչ է եղել, աղջկա կանչերն այնքան աղիողորմ, որ բավականին մարդ է հավաքվել, տեսել ու լսել այդ ամենը, բայց ոչ ոք, այդ թվում խմբագրություն այցելած տիկինը, վախեցել են միջամտել: Միայն մի տարեց կին է անեծքներ ուղղել՝ մորդ արգանդը չորանար, ինչին ի պատասխան «հերոսն» ասել է՝ «շուտ գնա ստեղից, թե չէ դու առանց արգանդի կմնաս»:

[1] Տես՝ http://hraparak.am/?p=87831&l=am%2F հղմամբ

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի համաձայն՝ «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝ (...) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները(...)»:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով Ձեր լիազորություններով՝ դիմում եմ Ձեզ՝ ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ սույն հաղորդմամբ նշված փաստերը պարզելու, քրեական գործ հարուցելու, մեղավորներին բացահայտելու և հանցանք կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Զալյան
azalyan@hcav.am
հեռ.՝ 094042268